ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 25.07.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/18

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի 29.06.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Վահրադյան Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Վահրադյան Շին» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 29.06.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ Արարատի մարզպետարանը 2017թ. հունիսի 6-ի թիվ 1 որոշմամբ հայտարարել է «ԱՄ-ՀԲՄԱՇՁԲ-17/01» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, ՀՀ Արարատ քաղաքի ՈԿՖ բանավան հասցեում փակ դրենժային համակարգի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով:

2017թ. հունիսի 23-ին նշված ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստի /այսուհետ՝ Հանձնաժողով/ թիվ 2 արձանագրություն 3-րդ կետի համաձայն սահմանված կարգով հայտ են ներկայացրել 4 մասնակիցներ, այդ թվում նաև՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն:

Արձանագրություն թիվ 2-ի՝ 4-րդ կետի համաձայն հայտերի բացման արդյունքում գնային առաջարկների հիման վրա առաջին չափաբաժնով, առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն:

2017թ. հունիսի 13-ին «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն ծանուցում է ստացել առաջին տեղ զբաղեցնելու մասին: Նույն օրը Ընկերությունը ծանուցվել է նաև այն մասին, որ իր և մնացած մասնակիցների ապահովումը ներկայացվել է հրավերի 7.1-րդ կետի 3-րդ պարբերության պահանջի խախտմամբ:

2017թ. հունիսի 26-ի թիվ 2-րդ արձանագրությամբ՝ Հանձնաժողովը որոշեց՝ հայտերի բացման ընթացքում «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի և մյուս մասնակիցների կողմից հայտի ապահովումը սխալ ներկայացնելու պատճառով հայտերը մերժել, չկայացած համարել վերոնշյալ ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգը, և հայտարարել նոր ընթացակարգ:

Ընկերությունը հայտնել է, որ Հանձնաժողովը հայտերը մերժել է՝ պատճառաբանելով, որ հայտերը չեն համապատասխանել հրավերի 7.1 կետի 3-րդ պարբերության պահանջին, որտեղ սահմանված է, որ հայտի ապահովումը պետք է ներկայացվի բանկային երաշխիքի կամ կանխիկ գումարի ձևով, մինչդեռ մասնակիցները հայտի ապահովումը ներկայացրել են միակողմանի հաստատված հայտարարության տուժանքի ձևով, և նշված հիմքով մերժելով մասնակիցների հայտերը՝ մրցույթը հայտարարել է չկայացած:

Սակայն հրավերի 7.1 կետի 2-րդ պարբերությամբ հստակ սահմանված է, որ հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության տուժանքի կամ կանխիկ գումարի ձևով:

Ընկերությունը գտնում է, որ իր կողմից ներկայացված հայտի ապահովումը միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով ներկայացնելը լիովին համապատասխանում է հրավերի 7.1 կետի 2-րդ պարբերության պահանջին և բխում է վերջինից:

Այսպիսով Ընկերությունը հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքը գնտում է, որ Հանձնաժողովը իրավունք չուներ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի հայտը ճանաչել հրավերի պահանջներին չհամապատասխանող, և մերժել այն:»:

Ընկերությունը գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է՝

1. Փոփոխել ԱՄ-ՀԲՄԱՇՁԲ-17/01 ծածկագրով հրատապ մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի բացման արդյունքում «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը մերժելու մասին որոշումը և այն ճանաչել հրավերի պահանջներին համապատասխանող:

2. Փոփոխել գնահատող հանձնաժողովի կողմից ԱՄ-ՀԲՄԱՇՁԲ-17/01 ծածկագրով հրատապ մրցույթի ընթացակարգը չկայացած համարելու և նոր ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը և մրցույթը համարել կայացած:

Բողոքի քննության ընթացքում տեղի ունեցած նիստերին մասնակցում էին «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հարություն Մայիլյանը և Լևոն Կիրակոսյանը:

2. <u>ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

ՀՀ Արարատի մարզպետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) Խորհրդին է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

««Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից 29.06.2017թ. ներկայացրած բողոքի վերաբերյալ հայտնում ենք, որ «ԱՄ-ՀԲՄԱՇՁԲ-17/01» ծածկագրով մրցույթի բոլոր 4 մասնակիցները հայտի ապահովումը ներկայացրել էին միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով, սակայն համաձայն հրավերի 7.1 կետի 3-րդ պարբերության, հայտի ապահովումը պետք է ներկայացվեր բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, քանի որ գնվելիք աշխատանքի նախահաշվային գինը գերազանցել է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը: Պատվիրատուն նշել է, որ թյուրիմացաբար բացման նիստի ժամանակ 1-ին տեղն զբաղեցնող մասնակից էր ճանաչվել «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն, սակայն նկատելով թույլ տրված սխալը, կայացվել է որոշում ընթացակարգը չկայացած լինելու մասին և լուծարվել է «ԱՄ-ՀԲՄԱՇՁԲ-17/01» ծածկագրով ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1) ենթակետի հիմքով:

Միաժամանակ հայտնում է, որ կրկնակի որոշում կայացնելիս առաջնորդվել է ՀՀ կառավարության 04.05.17թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 9 ենթակետի պահանջների համաձայն:»

Բողոքի քննության ընթացքում տեղի ունեցած նիստերին մասնակցում էին ՀՀ Արարատի մարզպետարանի ներկայացուցիչներ՝ Մովսես Մանուկյանը և Գուրգեն Եղիազարյանը:

3. ԳԲԽ-ԷՍ-2017/18 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուրդն ուսումնասիրել է «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի 28.06.2017թ. ներկայացրած բողոքը, «ԱՄ-ՀԲՄԱՇՁԲ-17/01» ծածկագրով հրատապ բաց ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), ՀՀ Արարատի մարզպետարանի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրավոր դիրքորոշումները և կարծիքները:

ՀՀ Արարատի մարզպետարանը՝ Արարատ քաղաքի ՈԿՖ բանավան հասցեում փակ դրենժային համակարգի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 06.06.2017թ. հայտարարել է «ԱՄ-ՀԲՄԱՇՁԲ-17/01» ծածկագրով հրատապ բաց ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

«Վահրադյան Շին» ՍՊԸ-ն կազմակերպված ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրել է հայտ:

Հանձնաժողովը 23.06.2017թ. ժամը 18:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության՝

- 3-րդ կետի 1-ին ենթակետով արձանագրել է հետևյալը.

«Հրավերով սահմանված հայտերի կազմման և ներկայացման պայմաններին համապատասխանող հայտ է ներկալացրել «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն, «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն, «Արարատշին» ՍՊԸ-ն և «Մոստովիկ» ՍՊԸ-ն:»:

- 4-րդ կետի 1-ին ենթակետով ընդունել է հետևյալ որոշումը.

«Հայտերի բացման արդյունքում գնային առաջարկների հիման վրա՝ 1-ին չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին:»:

Ընթացակարգի համակարգող Ա. Մանուկյանը 23.06.2017թ. գրությամբ դիմել է «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին հայտնելով հետևյալը.

«ՀՀ Արարատի կարիքների համար «ԱՄ-ՀԲՄԱՇՁԲ-17/01» ծածկագրով էլեկտրոնային ձևով ՀԲՄ ընթացակարգին նվազագույն գնային առաջարկի հիման վրա ճանաչվել եք 1-ին տեղն զբաղեցնող մասնակից: Առաջարկվում է Ձեզ 3 աշխատանքային

օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերը:»:

Ընթացակարգի համակարգող Ա. Մանուկյանը 23.06.2017թ. գրությամբ կրկին դիմել է «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին հայտնելով հետևյալը.

«Ձեզ էր ներկայացվել ծանուցագիր՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերը, սակայն Ձեր և մնացած մասնակիցների հայտի ապահովումը ներկայացվել են «ԱՄ-ՀԲՄԱՇՁԲ-17/01» ծածկագրով հրավերի 7.1 կետի 3-րդ պարբերության պահանջի խախտմամբ, քանի որ գնվելիք աշխատանքի նախահաշվային գինը գերազանցել է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ուստի հայտի ապահովումը պետք է ներկայացվեր բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Հետևաբար Ձեր և մնացած մասնակիցների հայտերը մերժվում են և ընթացակարգը համարվում է չկայացած:»:

Հանձնաժողովը 26.06.2017թ. ժամը 14:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությամբ Հանձնաժողովը ընդունել է հետևյալ որոշումը.

«Հայտերի բացման արդյունքում «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն, «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն, «Արարատշին» ՍՊԸ-ն և «Մոստովիկ» ՍՊԸ-ն հայտի ապահովումը պետք է ներկայացնեին հրավերի 7.1 կետի 3-րդ պարբերությամբ սահմանված կարգով՝ հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, քանի որ գնվելիք աշխատանքի նախահաշվային գինը գերազանցել է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, սակայն բոլոր կազմակերպությունների կողմից հայտի ապահովումը ներկայացվել է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով ՝ ուստի հայտերը մերժվում են:

Չկայացած համարել «ԱՄ-ՀԲՄԱՇՁԲ-17/01» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգը և հայտարարել նոր ընթացակարգ:»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի՝

- 7-րդ կետի համաձայն՝ հրավերը պայմանագիր կնքելու նպատակով մասնակցին առաջարկվող պայմաններն են.
- 8-րդ կետի համաձայն՝ հայտը հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է.
- 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նույն օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Օրենքի՝

- 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:
- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Հրավերի 7.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ նույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466>> գանձապետական հաշվին, որը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ նույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ նույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ նույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

Հրավերի 8.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Խորհուրդը արձանագրում է, որ Հրավերով սահմանվել է հայտի ապահովման ներկայացման երկու եղանակ՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով և բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, հետևաբար Խորհուրդը գտնում է, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից հայտի ապահովումը՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով ներկայացնելը համապատասխանում է Հրավերի 7.1 կետի 2-րդ պարբերությամբ սահմանված պահանջներին:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.

3) ոչ մի հայտ չի ներկայացվել.

4) պայմանագիր չի կնքվում:

Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ մերժելով «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտը և չկայացած հայտարարելով ընթացակարգը, խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի և 37-րդ հոդվածի 1-ին մասերով, ինչպես նաև Հրավերի 8.2 կետով նախատեսված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի 28.06.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Փոփոխել՝ «ԱՄ-ՀԲՄԱՇՁԲ-17/01» ծածկագրով հրատապ բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի բացման արդյունքում «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը մերժելու մասին որոշումը և այն ճանաչել հրավերի պահանջներին համապատասխանող:

3. Փոփոխել՝ գնահատող հանձնաժողովի կողմից «ԱՄ-ՀԲՄԱՇՁԲ-17/01» ծածկագրով հրատապ ընթացակարգը չկայացած համարելու մասին Հանձնաժողովի որոշումը և Ընթացակարգը համարել կայացած:

4. Չկայացած հայտարարել «ԱՄ-ՀԲՄԱՇՁԲ-17/02» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնման ընթացակարգը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ